

**Ազգային ազատագրական պայքարը ազգային ինքնության
պահպանման դրսևորում Հակոբ Խաչիկյանի և Ժան-Իվ Սուսիի
«Ամառ առանց այգաբացի» վեպում**

Նեյլի Գալստյան

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-109>

Հանգուցային բառեր. ամերիկահայ անգլիագիր գրողներ, պատմական հիշողություն, հայապահպանություն, հայոց պատմություն, հայ ժողովուրդ, անկոտորում ոգի

Նախաբան

Սփյուռքահայ հայագիր և օտարագիր գրողները, որ ճակատագրի հեզնանքով հայտնվել էին աշխարհի տարբեր ծագերում, օտարներին չճուլվելու, ազգային հիշողություն մեջ ինքնության պահպանման գիտակցությունը պահպանելու նպատակով հաճախ պատկերում էին իրենց ընտանիքի, տոհմի, սեփական ազգի պատմությունը: Դիմելով էթնիկ պատմական հիշողությանը՝ նրանք վեր էին հանում պատմական կարևորագույն անցքերը, կյանքի դժվարություններին դիմակայելու հայոց փորձերն ու մաքառումները, հերոսական դրվագները, հայի ազգային ոգին և արժանապատվությունը:

Ուսումնասիրության մեջ կիրառել ենք պատմահամեմատական, կառուցվածքային-տիպաբանական մեթոդները, գրական երկերի վերլուծության համակարգային և ամբողջական վերլուծության սկզբունքը: Փորձ է արվել՝ վեր հանելու ուսումնասիրվող նյութում պատճառահետևանքային կապերը, առնչությունները: Շարադրանքում օգտագործել ենք գրականագիտության ինչպես նախորդ շրջանների ուսանելի փորձը, այնպես էլ ժամանակակից ուսումնասիրություններն ու ձեռքբերումները:

Հակոբ Խաչիկյանը ևս սփյուռքահայ շատ ու շատ գրողների նման իր ստեղծագործության մեջ, ջանալով պահպանել ազգային ինքնությունը, անդրադարձավ ժողովրդի ազգային գիտակցությունն ու ինքնագիտակցությունը պահպանող պատմական հիշողությանը այն համարելով վերապրվող ներկա, ժողովրդի հոգևոր ներուժ, էթնոսը կայունացնող շարունակականություն: Միանգամայն դիպուկ է նկատել թուրք հրապարակախոս Ջեյնել Աբիդին. «Զարմանում եմ հայերի իրենց հատուկ անսպառ համառության վրա: Այդքան հարստահարված ու թալանված ազգը, որին ոչ միայն ֆիզիկապես են փորձել ոչնչացնել, այլև խլել նրա ինքնությունը՝ շատերին ներկայացնելով որպես թուրք կամ քուրդ, դեռևս պահպանում է սերը կյանքի նկատմամբ, նույնիսկ մտածում է հաշտության ու խաղաղության մասին: Ես զարմանքով տեսնում եմ, որ հայ ժողովուրդը ոչինչ չի մոռանում, իսկ ես գալիս եմ մի հասարակությունից, որը սիրում է մոռանալ, կարծես ոչինչ չի եղել: Բայց

կյանքն իրենն անում է: Պետք է հիշողությունը վառ պահել, այդ հիշողության շնորհիվ է, որ դուք՝ հայերդ, պահպանում եք ձեր ազգային ինքնությունը» [2]:

Ամերիկահայ անգլիագիր գրող Հակոբ Խաչիկյանը «Ամառ առանց այգաբացի» (“Summer Without Dawn”) վեպի հիմքում դրեց 20-րդ դարասկզբի հայ ժողովրդի՝ հանուն ապրելու իրավունքի և ազգային ինքնության պահպանման համար մղած ազգային ազատագրական պայքարը, պատկերեց արևմտահայության դաժան կյանքը, ցեղասպանությունը, հզոր տերությունների անտարբերությունը:

Հոդվածի նպատակն է 20-րդ դարի ամերիկահայ անգլիագիր գրող Հակոբ Խաչիկյանի և Ժան-Իվ Սուսիի «Ամառ առանց այգաբացի» վեպի ուսումնասիրությամբ բացահայտել և արժևորել ազգային ինքնության թեման՝ իր արտացոլումներով և դրսևորումներով:

Վեպի հետ կապված՝ քննության ենք առել գրողների առջև դրված հիմնախնդիրները՝ աշխարհասփյուռ հայության ազգային ինքնությունն ու ապրելու իրավունքը պահպանելու անխոնջ ջանքերը, ազգային-ազատագրական պայքարն ու հերոսական մաքառումները:

«Ամառ առանց այգաբացի» վեպը պատմավավերագրական փաստերով, պատմական տեղեկություններով և քաղաքական մեկնաբանություններով ամերիկահայ անգլիագիր արձակույթում միակ ծավալուն ստեղծագործությունն է, որն անաչառ վեր է հանում ժամանակաշրջանի անցուղարձը, միջազգային հասարակական-քաղաքական հարաբերությունները, 20-րդ դարի հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը: Գրողն անգլիագիր գրականության մեջ առաջին էր, որ ազգային ինքնության պահպանման հիմքում դրեց ազգային-ազատագրական պայքարը:

Ներկա ժամանակներում աշխարհասփյուռ հայության առջև ծառայած նորօրյա մարտահրավերների, լինելության բարդ իրավիճակների պայմաններում թեման ունի արդիական հնչողություն:

Հոդվածի բովանդակությունը

Հակոբ Խաչիկյանի «Ամառ առանց այգաբացի» (“Summer Without Dawn”) վեպը, որի համահեղինակն է Ժան-Իվ Սուսին, հայոց եղեռնը պատկերող, ազգային ոգին և արժանապատվությունը ներկայացնող անգլերեն լեզվով գրված միակ ծավալուն ստեղծագործությունն է, որը Ժան-Իվ Սուսիի խորհրդով առաջին անգամ տպագրվել է Փարիզում 1991 թվականին ֆրանսերեն: 2002 թ. այն հրատարակվել է անգլերեն, ընթերցողների պահանջով ունեցել մի քանի հրատարակություններ (2009 թ., 2015 թ.), որոնք վկայում են նրա գեղարվեստական ու պատմական բարձր հատկանիշների և համընդհանուր հետաքրքրության մասին: Վեպը թարգմանվել է բազմաթիվ լեզուներով՝ գերմաներեն, իսպաներեն, ռուսերեն, պորտուգալերեն, հայերեն: ԱՄՆ-ի և Կանադայի Թեքեյան մշակութային միության վարչության փոխատենապետ Երվանդ Ազատյանի գնահատմամբ՝ վեպի միջազգայնացումը նրա ունեցած

հաջողության գրավականն է: Ամայա Շահումյանի հայերեն թարգմանությամբ վեպը հայ ընթերցողին է ներկայացվել 2005 թվականին:

«Ամառ առանց այգաբացի» վեպը ջերմ ընդունելության է արժանացել գրական շրջանակներում: Օտար թե հայ ընթերցողների կողմից վեպն արժանացել է բարձր գնահատանքի: Դրա մասին են վկայում այն բազմաթիվ գրախոսականները, որոնք տարբեր երկրների մամուլներում ներկայացրել են վեպը: Համահեղինակներ Հակոբ Խաչիկյանը և Ժան-Իվ Սուսին 762 էջանոց վեպում պատկերել են թուրքական պետության՝ նախապես ծրագրած և իրականացրած հայաջինջ գործունեությունը: Հայոց պատմությանը քաջատեղյակ գրողները պատմավավերագրական փաստերով կարողացել են օտար ընթերցողին հավաստի ներկայացնել 19-րդ դարավերջի և 20-րդ դարակզբի հայթուրքական հարաբերությունները, Առաջին աշխարհամարտը, Օսմանյան կայսրության և դաշնակից պետությունների վարած հայատյաց քաղաքականությունը, թուրքական կառավարությունների կողմից դարեր շարունակ հայոց պատմության նենգափոխման ջանքերը, որոնց նպատակն էր երկիրն ազատել քրիստոնյաներից, հատկապես տեղաբնակ հայերից, տիրել Հայաստանին, ինչպես ժամանակին տիրել էին Բյուզանդիոնին: Ժամանակագրական առումով վեպն ընդգրկում է գործողությունների երկար ժամանակահատված՝ արդուլիամիդյան ջարդերից մինչև եղերական հանգուցալուծումը, որը բացվում է տարաբնույթ դրվագների աստիճանական մատուցման եղանակով: Խաչիկյանը ձգտում է պահել նյութի միասնական ընկալումը, նրան հաջողվում է տալ գործողությունների տրամաբանական հաջորդականությունը: Գրողը լայն տեղ է հատկացնում պատմական տեղեկություններին և քաղաքական մեկնաբանության տարրերին, որոնք ներկայացնում է օտար լսարանին: Պատմագետի շրջահայացությամբ Խաչիկյանը պատկերում է Աբդուլ Համիդ II-ի հայաջինջ գործունեությունը, Մեհմեդ V սուլթանի Թուրքիայի տարածքներն ընդլայնելու պանթուրքիզմի քաղաքականությունը, որում իրենց առանձնակի դերն են ունեցել երիտթուրքերը, հատկապես նրանց պարագլուխներ Թալեաթ, Էնվեր, Ջեմալ փաշաները, որոնց գերագույն նպատակն էր հայերի բնաջնջումն ու տեղահանությունը իրենց բուն հայրենիքից՝ Արևմտահայաստանից:

Վեպը անգլալեզու ընթերցողի համար ունի պատմական ճանաչողական նշանակություն: Պատմական փաստերն ուղեկցվում են հետաքրքիր և ինքնատիպ մեկնաբանություններով:

Անցկացնելով պատմական դիսկուրս՝ ամերիկահայ գրողը վեր է հանում դարերով իրենց երկրին ամուր կառչած հայ ժողովրդի անկոտրում ոգին, վարանումները, անմիաբանությունը, պայքարի այլաձևությունը, պասսիվությունը, նոր իշխանության կեղծ խոստումներին հավատալը: Գլխավոր հերոսի և նրա ընտանիքի միջոցով Խաչիկյանը պատկերում է մի ամբողջ ազգի ողիսականը: Գիրքը լի է ողբերգությամբ և, միաժամանակ, կյանքով: Սխալ-

ված չենք լինի, եթե վեպն անվանենք հարուստ և ստույգ ժամանակագրություն: Խաչիկյանը, իր հերոսին միտումնավոր նետելով քաղաքական ասպարեզ, պատկերում է 20-րդ դարասկզբի պոլսահայ քաղաքական դաշտը, հեղափոխական խմբակների ակտիվ գործողությունները, երիտթուրքերի շարժման իդեալիստական գաղափարները, որոնք այդպես էլ մնում են որպես սուկ գաղափարներ, նրանց հայտնալած քաղաքականությունը: Պատմության կիզակետում հայտնված հերոսներին գրողն օժտել է հերոսականության ներուժով: Այսպես՝ Վարդանը Պոլսում, քեռորդու՝ Տիրանի հետ տարվելով քաղաքական գործունեությամբ, անդամագրվելով հայ հեղափոխական խմբակներին, մտերմանալով երիտթուրքերի շարժման իդեալիստ անդամների հետ, դառնալով քաղաքական լրագրող, ծավալում է հայանպաստ գործունեություն: Արտասահմանում ֆրանսիական, անգլիական և ամերիկյան պարբերականներում հրատարակում է «Հայկական հարցին» վերաբերող հոդվածներ, գրքեր՝ վերհանելով Օսմանյան կայսրությունում ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ քրիստոնյա մյուս ժողովուրդների ծանր կյանքը: «Այս աշխատությունները որոշակի արձագանք էին ունեցել քաղաքական շրջանակներում, – գրում է Խաչիկյանը, – նույնիսկ Միացյալ Նահանգներում և Ռուսաստանում: Այս գրքերի պատճառով Վարդանի անունը հայտնվել էր սուլթանի ոստիկանության վտանգավոր հեղափոխականների ցուցակներում» [2, 29]: Ի դեմս Վարդանի՝ գրողը վեր է հանում պոլսահայ քաղաքական գործիչների ընդհատակյա ազգանվեր գործունեությունը: Խուսափելով հետապնդումներից, Պոլսից իր ընտանիքի հետ հեռանալով Անատոլիայի հայաշատ Սվաս քաղաքը՝ Վարդան Պալյանը շարունակում է իր հայանպաստ գործունեությունը՝ փորձելով հայ ժողովրդին դուրս բերել ծանր կացությունից, ազատել թուրքական լծից, պարտադրել թուրքերին՝ հայությանը վերադարձնելու իրենց իրավունքները, մշակում է նաև իրավահավասար պետություն ստեղծելու ծրագիր:

Վարդանը Խաչիկյանի համար միջոց է՝ ներկայացնելու 20-րդ դարասկզբի պոլսահայոց հասարակական-քաղաքական կյանքն ու գործունեությունը: Մխավված չենք լինի, եթե վեպի մեջ շեշտենք երկու առանձնահատկություն՝ պատմության խոր ընկալումը և կերպարներն անհատականացնելու ձգտումը: Հեղինակն աշխատում է չմիջամտել գործողությունների ընթացքին, նրանց վավերական հունին համապատասխանեցնել կերպարների պարզ ներքին կյանքի ելևէջները: Երիտթուրքերի իշխանության հաղթանակից հետո Վարդանը, շատ ու շատ պոլսահայ քաղաքական գործիչների նման (Ռուբեն Զարդարյան, Դանիել Վարուժան, Սիամանթո, Ինտրա, Ահարոն Ահարոնյան և այլք) դյուրահավատ, դուրս գալով ընդհատակից, ողջունում է երիտթուրքերի հաղթանակը՝ չկանխատեսելով հետագա քաղաքական ողբերգական իրադարձությունները: Միամտորեն հավատում է, որ երկրում վերջապես կլինի հավասարություն, եղբայրություն, հանդուրժողականություն: Պատմագիտակ գրողը հանգամանորեն ներկայացրել է երիտթուրքական կառավա-

րության ողջ համայնապատկերը՝ նրա ձևավորումից մինչև եվրոպականացված ու ազատական գաղափարակիր արդիականները, որոնց նպատակն էր ստեղծել ազատ դեմոկրատական, իրավահավասար պետություն և վերացնել պահպանողականների միջև պառակտումը: «Վերջիններս էնվերի, Թալեթի և Ջեմալի ղեկավարությամբ պանթուրանիզմ էին քարոզում,– գրում է Խաչիկյանը,– որի նպատակն էր բոլոր քաղաքացիների թրքացումը և կայսրության տարածումը մինչև Կենտրոնական Ասիայի հարթավայրերը, ուր թուրքական ցեղեր էին ապրում: Մի քանի ամիս տևած ներքին պայքարից հետո ազգայնամոլները սկսեցին վերահսկել կառավարությունը, և երիտթուրքերի շարժումը վերածվեց ցուցանակի, որը քողարկում էր բռնապետության հաստատումը» [3, 30]:

Հակոբ Խաչիկյանը թուրքական կառավարության հաջողությունները, ցեղասպանության իրականացումը կապում է հայ ազգի անմիաբանության, անվճռականության հետ: Գրողի հերոսներից ոմանք գիտակցում են, որ իրենք հալածանքի և բռնության են ենթարկվում թուրքերի կողմից, սակայն բազմիցս ոտնահարվում է նրանց արժանապատվությունը, շարունակում են հաշտության եզրեր գտնել թուրքերի և թուրքական կառավարության հետ: Նրանց պասսիվությունը պայմանավորված է ոչ այնքան վախկոտությամբ ու թուլակամությամբ, որքան այն գիտակցությամբ, որ աշխարհի քաղաքական վիճակը և հայ-թուրք ժողովուրդների ուժերի հարաբերակցությունը հնարավորություն չեն ընձեռում ծավալելու ազգային-ազատագրական պայքար: Այսպես են մտածում Սվասի ուսուցիչը, հոգևոր թեմը, հատկապես պատգամավոր, բժիշկ-սպա Վարդան Պալյանը, որը փորձում է գաղտնի իր ընտանիքը դուրս բերել Սվասից և ծավալել հայափրկիչ պայքար ոտքի հանելով ամերիկյան, եվրոպական տերություններին՝ ակնկալելով նրանց ճնշումը Օսմանյան կառավարության վրա: Հայության մի մասը համարում է, որ մոտ է ազատագրական ժամը, պատրաստ է ապստամբել թուրքական իշխանությունների դեմ: Այսպես է մտածում ազգային արժանապատվությունը ամեն ինչից վեր դասող Շիրակ Թևոնյանը, որը, հանուն ազգի բարօրության, ազատության և անկախության, պատրաստ է կոպելու և զոհվելու: Մակայն զուր են Սվասի հայ բնակչությանը ոտքի հանելու, նրանց ազգային ազատագրական պայքարի մեջ ներգրավելու նրա ջանքերը, Վարդանին զինված պայքարի առաջնորդ դարձնելու փորձերը: Ըստ Շիրակի՝ Վարդանն այն միակ ազդեցիկ հայրենասեր քաղաքական գործիչն է, որին հետևելով՝ ժողովուրդը ոտքի կկանգի: Վերջինս, ինչպես տարիներ առաջ, այնպես էլ այս օրերին, դեմ է զենքով պայքարին՝ նախընտրելով գրչի պայքարը: Խաչիկյանի Վարդանի կերպարը այս առումով նույնանում է ֆրանսահայ գրող Վահե Քաչայի «Մի դաշույն այս պարտեզի մեջ» վեպի հերոս Ազատի հետ, որը ևս պայքարի միջոց էր ընտրել գրիչը և որի գրչից նույնպես թուրքերը վախենում էին:

Գերելով Շիրակին՝ նրան՝ որպես խայծի, թուրքական իշխանությունն

օգտագործում է Վարդան Պալանի վրա ճնշում գործադրելու համար: Նպատակը Վարդանին գործակալ դարձնել էր, նրա արտասահմանյան կապերը օգտագործելը՝ Թալեաթի ցուցումով աշխարհի մարդկությանը, ամերիկյան, եվրոպական տերություններին, քաղաքական առաջադեմ գործիչներին մոլորեցնելը, հայերի տարագրությունը աշխարհին իբրև մարդասիրության, բարի կամքի դրսևորում ներկայացնելը: «Դու պետք է հողվածներ գրես օտար թերթերի համար և նամակներ ուղարկես Միացյալ Նահանգներում և այլուր բարձր դիրք գրավող մարդկանց,– ասում է Գանիյ բեյը Վարդանին,– դու նրանց կբացատրես ռազմական գործողությունների թատերաբեմից ազգաբնակչությանը հեռացնելու անհրաժեշտությունը և կվկայես, որ այդ տեղահանությունները լավ են կազմակերպված, ընթանում են մարդասիրական պայմաններում, կգովերգես այն գյուղերի գեղեցկությունը, ուր տեղահանվածները պետք է բնակվեն» [3, 157]:

Ազգային արժանապատվության զգացումը ու ոգին վայրկյան անգամ չեն լքում Վարդանին: Թե՛ դաժանաբար խոշտանգումը, հուսալքելու համար աչքի առջև Շիրակ Թևոնյանին գնդակահարելը, թե՛ ընտանիքի անդամների հետ հաշվեհարդար տեսնելու սհաբեկումները չեն ընկճում հերոսին, չեն կոտրում ոգին: Միակ բանը, որ զոջում է, Շիրակի հետ չհամագործակցելն էր. դա տվյալ պահին միակ ճիշտ որոշումը կլիներ: «Վարդանը շատ աւելի յետոյ,– իրավագիտորեն նկատել է Ս. Դանիելյանը,– իր ողիսական չարչարանաց կեանքի դասերից պիտի վերաիմաստաւորէր քաղաքական կարճատես քայլերի տրամաբանութիւնը, պիտի հասկանար, որ մտաւորականն իր մէջ շատ աւելի ամուր էր նստած, քան զինուորականը, մարտնչող ոգին, որ Թեւոնեանի՝ պայքարի ելնելու պատգամը աւելի փրկարար, ճշմարիտ ելք էր, քան թշնամու ողորմութիւնը հայցելը» [1, 361]:

Խաչիկյանը Վարդանին տանում է Հոմերոսի Ողիսևսի փորձություններով լի ուղիով: Գրողը, իր հերոսին միտումնավոր դարձնելով խոսափող, ակնաստես-վկայի աչքերով պատկերում է կրակների, արկածների, արյան միջով տարագիրների անցած ճանապարհը՝ անթաղ, խոշտանգված, խեղված դիակներ, սովալլուկ մանուկներ, կմախքացած կանայք, հացի գնով վաճառվող մանկահասակ երեխաներ: Նատուրալիստական պատկերներով Խաչիկյանը հայոց տեղահանությունն ու սպանող վարպետորեն հրամցնում է օտար ընթերցողին: Թուրքական կառավարության ծրագրած հայաջինջ քաղաքականությունը ամբողջացնելու նպատակով, ֆիզիկական բնաջնջման պատկերներ տալուց բացի, Խաչիկյանը վարպետորեն ներկայացնում է նաև հայերի հոգևոր բնաջնջումը: Ի դեմս ծննդավայր Ափիոն Գարահիսարի՝ գրողը պատկերում է հայկական գյուղերի դավանափոխությունն ու թրքացումը: «Հետևելով որոշ հայրենակիցների օրինակին՝ Պարունակ Ավագյան ժամագործը ուրացել էր, փրկվելու համար հրաժարվել լեզվից և փոխել անունը՝ դառնալով Օրալ էֆենդի: Վարդանը չէր դատապարտում նրան և որոշեց

չխռովել նրա հոգեկան անդորրը, որը փուխը էր, եթե Վարդանը դատեր եկեղեցու մոտով նրա անցնելու ձևից» [2, 603]: Թրքացման վառ օրինակ են թաթար ուսուցիչ Քերիմը և նրա կինը՝ Հալիդեն, որ ծայտված հայուհի էր՝ Արուսյակ անունով: Մահվան սպառնալիքի տակ Քերիմն ու Հալիդեն ճշտում են իրենց բարոյահոգեբանական վիճակը, մտերմիկ հարաբերությունները: Գրողը մեկ առ մեկ քննում է մահվան դեմ հանդիման կանգնած հերոսների վարքագիծը: Եթե ավագյանները, հանուն իրենց անվտանգ կյանքի, արյունակցական կապերը մեկընդմիջտ խզում են հայությունից, մտքում անգամ վախենում են արտաբերել հայ բառը, ապա արուսյակները պատրաստ են իրենց կյանքը զոհաբերել հանուն ազգի: Քերիմն ու Հալիդեն, բազմիցս վտանգելով իրենց կյանքը, մահվան ճիրաններից փրկում են Վարդանին և տանայակ որբ ու անտեր երեխաների: Տարբեր ճակատագրեր են մեր առջև, ազգային և, ինչու չէ, նաև մարդկային պատասխանատվության տարբեր ընկալումներ: Լարվածության աստիճանական շիկացումը բնութագրական է վեպին: Կենաց ու մահվան ճանապարհին Վարդանը շարունակում է իր քաղաքական գործունեությունը, իր հողվածներով ակնկալում է օտար տերությունների աջակցությունը: Հերոսի խորին համոզմամբ «Գրավոր խոսքը նույնքան գործուն գենք է, որքան հրանոթները» [2, 321]:

Ապաստանելով Ամերիկայում՝ հերոսը շարունակում է իր հայանպաստ, հայապահպան գործունեությունը, լծվում է հայոց դատի պաշտպանությանը: «Վարդանը հայկական թերթի հիմնադրեց, որը ժամանակի ընթացքում ազդեցիկ դարձավ: Հարյուր հազարավոր հայրենակիցներ հաստատվել էին աշխարհի տարբեր երկրներում, և շատ կարևոր էր, որ նրանք կապ պահպանեին, չնայած նրանց բաժանող սահմաններին և օվկիանոսներին» [2, 762]: Վարդանի ընդհանրական կերպարը կերտելիս Խաչիկյանը նկատի է ունեցել ֆրանսահայ հասարակական-քաղաքական գործիչ Շավարշ Միսաքյանին, որի հիմնադրած «Հառաջ» թերթը աշխարհասփյուռ հայերին կապող օղակ էր:

Համաշխարհային ասպարեզում հաճախ զուգահեռներ են անցկացվել Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» և «Ամառ առանց այգաբացի» հսկայածավալ վեպերի միջև: «Վերջապես լույս տեսավ մի վեպ, որ գերազանցում է Ֆրանց Վերֆելի հանրահայտ գործը՝ «Մուսա լեռան 40 օրը»: Հակոբ Խաչիկյանի և Ժան-Իվ Սուսիի «Ամառ առանց այգաբացի» վեպը,– գրում է Մորիս Ֆարիին,– հոմերական հղացման գործ է, արդարև, Հումերոսի «Ողիսականի» նման անքակտելի սիրո կրքոտ պատմություն, որ պատկերում է նաև ահավոր տառապանքի հանդեպ ցուցաբերված տոկունության անչափելի ուժը» [2, քաղվածքներ մամուլից]:

Ինչպես նկատել է ԱՄՆ-ի եւ Կանադայի Թեքեյան մշակութային միության վարչության փոխատենապետ Երվանդ Ազատյանը, «Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» երկը լոկ հետաքրքրություն ու ներկայացում էր 1915 թ. ցեղասպանության մի դրվագի: Հ. Խաչիկյանի գիրքը փաստագրական եւ

պատմական տվյալների հիման վրա հեղինակած անձնական եւ ընտանեկան դրամա է» [2, քաղվածքներ մամուլից]:

Թե՛ Ֆրանց Վերֆելը, թե՛ Հակոբ Խաչիկյանը քաջատեղյակ են 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայոց պատմությանը, երկուսն էլ ներկայացնում են համաժողովրդական տարերքը, հայոց հոգեբանությունը, արդարության պայքարը: Ի տարբերություն Վերֆելի, որը պատկերել է Մուսա լեռան և հարակից գյուղերի կյանքը, հերոսական պայքարը, Հակոբ Խաչիկյանը պատկերել է ողջ հայոց տեղահանությունը, հայերի ողիսական ճանապարհը Սվասից մինչև Հալեպ:

Վերֆելի հերոսը մարտնչում է զենքով, Խաչիկյանի հերոսը՝ գրչով: Թեև երկուսի պայքարի միջոցները տարբեր են, սակայն նպատակը մեկն է. երկուսն էլ կրում են ժողովրդի փրկության խոր, պատասխանատու հանձնառությունը: Խաչիկյանի վեպը, ի տարբերություն Վերֆելի վեպի, աչքի է ընկնում պատմական հարուստ տեղեկություններով, պատմափաստագրական նյութերով: Խաչիկյանը միտումնավոր հաճախ քաղաքական լուսաբանումներ և մեկնաբանություններ է անում՝ օտարազգի ընթերցողին ցույց տալու համար Հայոց ցեղասպանությունը՝ որպես պատմական օբյեկտիվ իրողություն:

Եզրակացություն

Հակոբ Խաչիկյանը և Ժան-Իվ Մուսին պատմական հարուստ տեղեկություններով, պատմափաստագրական նյութերով, քաղաքական լուսաբանումներով և մեկնաբանություններով հագեցած ծավալուն վեպով ընդգծել են հայի ազգային անկոտրում ոգին, ազատատենչությունը՝ արժևորելով ազգային արժանապատվությունը: Վիլյամ Սարոյանի, Ջեք Հաշյանի նման Հակոբ Խաչիկյանը, հիմք ընդունելով 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ և թուրք ժողովուրդների փոխհարաբերություններն արտացոլող տվյալները, իր ստեղծագործությամբ ներկայացրել է ազգային-ազատագրական պայքարը, հայոց եղեռնի պատմական հայեցակերպը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2023.1-109>

Գրականություն

1. Դանիելեան Ս., Միջուկի տրոհումը: Միլոնքահայ գրականութեան պատմութիւն, Գիրք 1, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2011, 407 էջ:
2. Խաչիկյան Հ., Մուսի Ժ. -Ի., 2005, Ամառ առանց այգաբացի, Երևան, ՀԳՄ հրատ., 762 էջ:
3. Հոխիկյան Ն., Ինչպե՞ս է Թուրքիան որպես բնական պատնեշ օգտագործում քրդերին ու հայերին, <https://armeniasputnik.am/20220215/inchpes-e-turqian-vorpes-bnakan-patnesh-ogtagvortsum-qrdarin-uhajerin-38714771.html> (բեռնման օրը՝ 16. 01. 2022):

**Национально-освободительная борьба как проявление сохранения
национальной идентичности в романе Акопа Хачикяна и Жана-Ива Суси
«Лето без зари»**

Нелли Галстян

Резюме

Ключевые слова: *американо-англоязычные писатели, историческая память, сохранение армянской нации, армянская история, армянский народ, несокрушимый дух*

Роман Акопа Хачикяна и Жана-Ива Суси «Лето без зари» – единственное объемное произведение с историографическими фактами и политическими комментариями, в котором беспристрастно освещается течение времени, армянские общественно-политические отношения, борьба за существование армянского народа начала 20-го века. Также описываются армяно-турецкие отношения конца 19 – начала 20 века, Первая мировая война, антиармянская политика Османской империи и союзных государств, усилие турецкого правительства по фальсификации армянской истории на протяжении веков, стремление доминировать над Арменией. С хронологической точки зрения роман охватывает длительный период действия: от погромов Абдула-Хамида до эпической развязки, которая разворачивается в постепенном представлении различных эпизодов.

А. Хачикян и Ж.-И. Суси стремятся сохранить единое восприятие материала, им удается дать логическую последовательность действий. Писатели много места уделяют историческим сведениям и элементам политической интерпретации. Писатели, первыми в англоязычной американской литературе, поставили национально-освободительную борьбу в основу сохранения национальной идентичности. При написании романа А. Хачикян и Ж.-И. Суси обращались к исторической памяти, сохраняющей национальное сознание и самосознание народа, рассматривая ее как живучее настоящее, духовный потенциал народа и преемственность, стабилизирующую этнос. Обращаясь к национальной исторической памяти, они подняли важнейшие исторические события, попытки и борьбу армянского народа противостоять жизненным трудностям, героические эпизоды, национальный дух и достоинство. В романе мы рассмотрели проблемы, с которыми столкнулся американо-армянский англоязычный писатель: неустанные усилия по сохранению национальной идентичности и права на жизнь армян всего мира, национально-освободительную борьбу и героические усилия родного народа. В натуралистичных образах А. Хачикян и Ж.-И. Суси умело представили зарубежному читателю депортацию и резню армян. Чтобы завершить намеченную турецким правительством проармянскую политику, они, помимо изображения физического уничтожения, мастерски представили духовное уничтожение армян.

**National Liberation Struggle as a Manifestation of National Identity
Preservation in Novel “Summer Without Dawn” by Hakop Khachikyan and
Jean-Yves Soucy**

Nelli Galstyan

Summary

Key words: *American-English writers, historical memory, preservation of the Armenian nation, Armenian history, Armenian people, indestructible spirit*

The novel “Summer Without Dawn” by Hakop Khachikyan and Jean-Yves Soucy is a unique voluminous work with historiographical facts and political comments, which impartially covers the passage of time, Armenian social and political relations, the struggle for the existence of the Armenian people in the the 20th century, Armenian-Turkish relations at the end of the 19th-early 20th century, the First World War, the anti-Armenian policy of the Ottoman Empire and the allied states, the effort of the Turkish government to falsify Armenian history, the desire to dominate Armenia. From the chronological point of view, the novel covers a long period of action, from the massacres committed by Abdul-Hamid to the epic denouement, which unfolds in the gradual presentation of various episodes.

H. Khachikyan and J.-Y. Soucy strive to preserve a single perception of the material, besides; he manages to give a logical sequence of actions. The writers pay much attention to the historical data and elements of political interpretation. The writers were the first in English-language American literature to put the national-liberation struggle at the basis of preserving national identity. When writing the novel, H. Khachikyan and J.-Y. Soucy turned to historical memory, which preserves the national consciousness and self-consciousness of the people, considering it as a living present, the spiritual potential of the people and continuity that stabilizes the ethnicity. Turning to the Armenia’s National Memory, the author pointed out Armenian history’s most important historic events, attempts and fights in resisting life’s difficulties, heroic episodes, national spirit and dignity. In the novel, we studied the problems that the American-Armenian English-speaking writer faced with: unceasing efforts to preserve the national identity and the right to life for the Armenians of the whole world, the national liberation struggle, and heroic efforts of the native people. In naturalistic images H. Khachikyan and J.-Y. Soucy skillfully represented the deportation and massacre of Armenians to foreign readers. In order to complete the pro-Armenian policy planned by the Turkish government, he, in addition to depicting the physical destruction, masterfully described the spiritual destruction of the Armenians.

Ներկայացվել է 14.04.2023 թ.

Գրախոսվել է 19.04.2023 թ.

Ընդունվել է տպագրության 25.05.2023 թ.